

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԵՐ՝ ԻՆՉՊԷՍ ՈՐ ՏԵՍԱՅ Հեղինակ՝ Դոկտ. Հրայր Ճեպենեան

Արի ԹՕՓՈՒԶԽԱՆԵԱՆ

Որպէս Արարական Մոցի Աստուածաշունչի Ընկերութեան Ընդհանուր Քարտուղար, Դոկտոր Հրայր Ճեպենեան պատեհութիւնը ունի շատ մը երկիրներ այցելելու, եւ առիթը կ'օգտագործէ՝ ծանօթանալու հոն կայք հաստատած հայու բեկորներուն հետ: Վերջին եօթը տարիներու ընթացքին իր ձեռք ձգած փորձառութիւններն են որ հանրութեան կը ներկայացնէ վերոնշեալ խորագիրը կրող 550 էջերէ բաղկացած հատորով մը, որ այս տարի լոյս տեսաւ Պէյրութ՝ Համազգայինի Վահէ Սէթեան հրատարակչատունէն:

Իրականութեան մէջ, այս ծաւալուն գիրքը չի գրադիր միայն գուտ հայերով: Հեղինակին հետաքրքրութեան առարկան են նաեւ շատ մը օտարներ – յոյն, արաբ, թուրք, հնդիկ, որոնցմէ ոմանք հայկական ծագում ունին: Միաժամանակ բովանդակութեան մաս կը կազմեն բազմաթիւ հոգեւոր խորհրդածութիւններ:


Ինչպէս վերնագիրը կոսեցի կու տայ, աշխարհի չորս ծագերուն ապաստանած հայորդիներուն ապրած առօրեան է որ կը հանդիսանայ հեղինակին հետաքրքրութեան կիզակէտը: Ան կը ջանայ մուտք գործել անոնց ներաշխարհէն ներս: Իր նպատակն է «մէկ-մէկ փակել հայկական իրականութիւնը՝ հանդիպելով Հայուն», նոյնիսկ եթէ ան գտնուի «հեռուոր Աւստրալիոյ մէջ»: Իր այցելութիւններէն կ'եզրակացնէ թէ սփիւռքի մէջ «մեր հայկական ինքնութեան մեծագոյն ու կարեւոր հիմնահարցը՝ հայապահպանութիւնն է և պահանջատիրութիւնն է»: Սակայն «կարելի չէ պահանջատիրութեան գործընթացին մէջ յարատեւել, երբ մեր արժէքները ներազգային իմաստով սկսած են վտանգուիլ: Մեր արժէքներուն օղակներուն մէկիկ-մէկիկ թափփիլը պիտի նշանակէ մեր պահանջատիրութեան նժարին եւ անոր հաւասարակշռութեան խախտումը»:

Հ. Ճեպենեան կը շեշտէ հայերէն խօսելու կարեւորութիւնը ընտանեկան յարկին տակ, որպէսզի կարենանք պահել մեր ինքնութիւնը՝ ազգային, բրիտանացական եւ մշակութային պատկանելիութեամբ: Արդարեւ «ազգ մը՝ որ ենթարկուած է ցեղասպանութեան, ազգ մը՝ որուն պատմութիւնը թաթխուած է իր զաւակներուն արիւնով, չի կրնար սակարկութեան դնել իր ինքնութիւնը»:

Ըստ հեղինակին, «օրուան մեծագոյն հրամայականը՝ Հայուն հոգեւոր եւ եկեղեցական նոր հայեցակէտ ունենալն է»: Ան կը գրէ. «Ի՞նչ պիտի ընէ Հայը այսօր իր հազարամէկ հիմնահարցերուն դիմաց – պիտի վերաշխուծացնէ իր մէջ իր ազգային հաւատքի ոյժը: Այս ոյժով՝ պիտի տոկայ ամէն դժուարութեան, եւ սիրէ իր ինքնութիւնը, մշակոյթը եւ հաւատքը: Սակայն «կայ նախապատուութիւն մը, որ վեր է ամէն միջոցառումներէ՝ հայրենիքը կերտել եւ սփիւռքը վերակազմակերպել»:

Համաձայն Դոկտ. Ճեպենեանի, Հայը ո՛րք ալ ծնի, կ'առնէ այդ երկրին դրոշմը, կնիքն ու նկարագիրը, կը շինէ ու կը շէնցնէ: Իսկ եթէ փոխադրուի այլուր, նոյնը կ'ընէ, հետապնդելով ազգապահպանումի եւ հայապահպանումի տեսլականը: Բայց զայն իրականացնելու համար պէտք է մնայ հայկական կառոյցներէ ներս:

Ընթերցողը տեղեկութիւն կը ստանայ հեղինակին այցելած երկիրներուն մէջ հաստատուած հայ գաղութներու կազմութեան եւ դիմագրուած հարցերուն մասին. – Յորդանան, Քուէյթ, Կիպրոս, Մալթա, Յունաստան, Իտալիա, Հոլանտա, Լեհաստան, Էսթոնիա, Լաթվիա, Եթովպիա, Հարաւային Աֆրիկէ, Էլ Սալվատոր, Փերու, Արժանթին, Զիլի, Աւստրալիա, Ճափոն: Անշուշտ նաեւ՝ Հայաստան, Թուրքիա, Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ: Կը ծանօթանայ օրինակելի հայերու՝ ցրուած աշխարհի չորս ծագերը:



Անոնց մէջ կը գտնուի Հոլանտայի Տիգրանը՝ որուն մասին կը գրէ. «Տիգրանին ընթացքը Հայուն ընթացքն է, ո՛չ թէ չլինելու՝ այլ լինելու, հակառակ ծանր բեռան՝ շարունակելու: Ասիկա Հոլանտայի յատուկ չէ, այլ ամբողջ աշխարհի մէջ»: Յիշուելու արժանի են նաեւ Էսթոնիոյ Արտեմն ու Ռազմիկը, Լաթվիոյ Տէր Խոսրովը, Ճափոնի Ռազմիկը: Ամփոփ կենսագրութիւններ ալ տրուած են քիչ թէ շատ ծանօթ անձերու... Ասատուր Տէօվլէթեան, Վարդան Թաշնեան, Վարդգէս Էսփիպաշեան, Սոնա Նաշեան, Հետուիկ Պիւլ, Վեր. Տիգրան Գունտաֆնեան, Վեր. Արմենակ Միսիրեան (Արմիս), Աւետիս Ճէպէնեան, Յովհաննէս Հինդլեան:

Հեղինակը շատ յաճախ կը վերյիշէ Պէյրութի Էշրեֆիէ թաղին մէջ հաստատուած Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի ուսուցիչներն ու դասընկերները, եւ անոնց հետ կապուած նշանակալից դէպքերը: Կը նկարագրէ նաեւ յուզիչ եղելութիւններ, հերոսական արարքներ եւ անակնկալ հանդիպումներ: Յիշարժան են «Ա՛լ գրելու ոյժ չմնաց», «Վէրքը խորունկ է», «Այշային անէծքը», «Հայուն բարեկամները» եւ «Զէլէպիին խոստումը» խորագրուած գլուխները:

Դիւրըմբռնելի, յարաբերաբար կարճ ու գրաւիչ վերնագիր կրող գլուխներով, նոյն ու բազմազան բովանդակութեամբ, խորունկ հայրենասիրական եւ քրիստոնէական շունչով գրուած այս պատկերագրող գիրքը կը յանձնարարենք մեր բոլոր ընթերցողներուն: Ստանալու համար՝ դիմել հեղինակին... Dr. Hrayr JEBEJIAN, P. O. Box 26071, 1666 Nicosia, Cyprus - hrayr.jebajian@gmail.com: